

զանիկա: Աղեփանդրիոյ պատրիարք Եւսիփիոս (Ժ. դար) իւր առաքելներն գրած Տարեգիրքին մեջ Վահանի զինուորներուն Դամասկոսի մօտերը Ռամասի հեղեղասին բով Տեղի ունեցած մեծ դժբաղդութիւնը մանրամասն կը նկարագրէ եւ Տեղեկութիւն կուտայ Վահանի կացութեան մասին: 634ին Դամասկոսի մեջ կար Մանսուր անուանով պաշտօնեայ մը որ քաղաքապետն էր եւ Հերակլի զանապահը, եւ ան էր որ կը վճարէր զինուորներու քուսակը ու կը հայքայէր պարէնը: Վահան դրամ կը պահանջէ Մանսուրէն, վերջինս կ'առարկէ դրամի չգոյութիւնը եւ դրամ չի վճարէր Վահանի բանակին, հակառակ ստիպողութեան: Առաքական զինուորները մօտեցած էին երկու օրուան ճանապարհ, իւր եւ առաքելներուն մեջ կը գտնուէր անդունդի նմանող հեղեղաս մը. մինչ երկու կողմերը այսպէս պատրաստակամ էին յարձակման, Մանսուր բողոք Դամասկոսը եւ գտաւ Վահանի բանակը, իբր այն քէ դրամ բերած էր զինուորներուն բաշխելու համար: Մանսուր երբ կը մօտենար բանակին գիշեր էր. Դամասկացի բազմաթիւ մարդեր կ'ընկերանային անոր եւ կը կրէին լապտերներ, եւ երբ բանակին մօտեցան՝ սկսան քմբուկներ եւ ծնծղաներ զարնել եւ բարձրադաղակ պուռալ. Մանսուր այսպէս կը վարուէր չարամութեամբ եւ խաբէութեամբ: Վահանի զինուորները լսելով ծնծղաներու եւ քմբուկներու աղմուկը կասկածեցան քէ Առաքելներ կ'ուզէին ետեւի կողմէն յարձակիլ եւ պաշարել, ամենքն ալ սկսան փախչիլ. ինկան Ռամասի մեծ հեղեղասին մեջ եւ կորան: Փոքրիկ մաս մը միայն ազատեցաւ, որոնցմէ ոմանք փախան զանազան Տեղեր, ուրիշներ վերադարձան Դամասկոս, մինչեւ երուսաղեմ եւ Պաղեստինեան Կեսարիա: Դամասկոս դիմողները պաշարումէ վախճալով պաշար հաւաքեցին եւ յարձակման պատրաստուեցան, եւ միւս կողմէն ալ գրեցին Հերակլի ա'յն ամէն չարամութիւնները, որոնցմով Մանսուր պատնառ եղած էր զինուորներուն պատրտեան, ու անկէ օգնութիւն խնդրեցին: Իսկ Վահան կայսեր քով վերադառնալէ եւ ապանւնուէր փախնալով՝ փախուստ տուաւ եւ քաղաքացաւ Սիւս շուր, ուր ընդունեց փանական կեանքը եւ ստացաւ Անաստաս անունը. ան է հեղինակը քարոզի մը, որուն մեջ կը մեկնաբանէ Դաւթի վեցերորդ Ստղոսը (Տե՛ս Patro. Grec. t. CXI, col. 1096-1097):

Վահանի մասին Եւդիփիոսի խօսքերը համառօտեցինք. ան՝ Վահանի Տեղ Մահան կը գրէ, ինչպէս նոյնը կը գրեն բոլոր առաք